

Յապաղած Յորելեանը

Պատերազմները մեզի այնչափ իրենց անհեղինակ դարձրածին զաւարտութեանը տակ ճակեցին ու տարուցին, այնչափ զըլուխն խելք չի թողուցին որ, ակամայ կարծես մոռացութեան տուինք շատ մը նուիրական բաներ, որոնց գլխաւորներէն մէկն ալ էր՝ տօնել մեր Գրեորու Գրեորին 1500 ամեակը և Հայ Տպագրութեան 400 ամեակը:

Կը յուսայինք որ մեր երկրին սա խառնակ գործերը կը շտկուէին ու կարգի կը մտնէին և մենք ուրախ ու չէն սրտերով կը տօնէինք ու կը պանծացնէինք մեր տօներու այդ վեհագոյնը:

Բայց ո՛չ միայն մեր բազմաշարժար գլուխը չազատեցաւ իր մշտաւառ կրակներէն, ո՛չ միայն այդ կրակները մեզ համատարած մոխիրներու ու ամբիւններու վրայ նստեցուցին և մեր գլխուն վրայ սգաւորութեան մշտատես սև դրօշակը քաշեցին, այլև, աւա՛ղ որ, մեր երկիրը նմանեցաւ այն սգաւոր տանը, որմէ ամէն օր սիրական մեռել մը դուրս կը հանեն և տան դուռը ընդմիտ կը փակուի հարսնիքներու ու տօնախմբութիւններու առջև:

Մեր ձեռքէն գնաց Ափրիկեան Տրիպոլիսն ու Պէնկագին՝ Ափրիկէի ցամաքին վրայն իսպառ խնարհեցնելով Օսմանեան մահկապանը դրօշակը:

Մեր ձեռքէն գնաց ամբողջ Բուսէլիս, Երուսաղիմի հողին վրայ, Արևմուտքի մէջ մեր Արեւելքի պայծառ աստղը մարը մը տաւ՝ ալ անգամ մըն ալ կարծես չերեւելու պայմանաւ:

Ի՛նչ յոյսեր ունէինք մեր սրտերուն մէջ, Մեզի մինչև Սօֆիա կը հասցնէին մեր եռանդուն հայրենասէրները Մեր փրօսապանը դրօշակը, մինչև, նոյն իսկ տասնևհինգ օրէն, Պեկլրատ կը հասցնէին մեզի պատերազմը օր առաջ սկսելու նըշան տուողները:

Աւա՛ղ, ո՛չ միայն մեր այս բոլոր աղւոր երազները ցնդեցան, այլև դեռ չենք գիտեր թէ՛ ողջ առողջ ալ վաղը պիտի աթթնանք մեր սա անուշիկ երազատեցութիւններէն, քանի որ դեռ պատերազմին կողմնակիցները շատ են և անհայտ արիւնքի վազքը սիրելի է դեռ մենէ շատերուն...

Ամիսներէ ի վեր հայտութեան խօսքը կրննք, «պատմաւոր հայտութեան» մասին կը ճառենք, և ի հարկին կը սպասանք ալ, առանց քաղ մը ետ կամ առաջ առնելու: Կը մոռնանք թէ մեր մեծխօսքի կողմնակիցներն էին որ մեզի այս հալլին հասցուցին, կը մոռնանք թէ սուրին վերքը պատմաւոր հայտութեան միակ պայմանն է և վերջապէս այն թէ՛ մենք այս պատերազմին մէջ, սկիզբի մէկ օրէն ի վեր, շննս չունէինք և ասկէ վերջն ալ ունենալիք չունինք... Ինչո՞ւ ուրեմն մատ մը վեր, մատ մը վար, գործը անուշ տեղը չենք օգտեր կապել, հի՞մէ ար դարեւ ալ անուշ տեղը մնացած է:

Ուզածնիս պատերազմ չէ՞ր. պատերազմիցանք, ու եթէ կրնանք գե՛տ՝ պատերազմինք: Բայց չէ՞ որ պատերազմը վերսկսելէն ի վեր ուր որ ենք հոն գամուած մնացեր ենք, Զաթալճայէն կ'ելլենք, նորէն Զաթալճա կը մտնենք, Պուլալիբը դեռ չենք գիտեր թէ մե՞րն է թէ՛ անոնցը: Մատ մը առաջ խաղացած չունինք, մինչդեռ տմէն օր կըսենք թէ մեր բոլոր հակառակներուն վրայ բռնուն կ'իւնեն տե-

ղի կունենան և մենք յաղթական կ'ելլենք:

Ասիկա կամ ժողովուրդը խաբել է, կամ չենք գիտեր ինչ անուն տանք:

Հաշտութիւն կուզենք, հաշտութիւնք. այսչափ հողեր կորսնցնելէն վերջ էտիր. նէն ալ հա՛ եղեր, հա՛ չէ եղեր, մէկ հաչիւ է: Մեզի պակասած հողը չէ, այլ խաղաղութիւնը, ինչպէս թեմաք գոնէ անձերու կորուստն ալ կը շահինք, և խելքերնիս գլուխնիս կուգայ:

Երկրին ներքին վեհակը ալ անտանելի ս'յսած է դառնալ, մանաւանդ Հայկական նահանգներուն մէջ, ուր իբր թէ բարեկարգութիւններ պիտի ըլլային, Զո՛ւ կը խաբեն: Պատերազմի մէջ բարեկարգութիւն կըլլա՞յ:

Եւ դարձեալ չէ՞ որ ամէն ազգ, ամէն ցեղ իր մասնաւոր խառնուածքն ունի: Յեղեղ կան, որոնց համար պատերազմն ու արիւնն է սիրելի, ցեղեր ալ կան, որոնք պատերազմն ու արիւնը կանխածն ու կը նզովին և կը սիրեն քաղաքակրթութիւնը:

Սենք հայեր, վերջիններէն ենք և ունինք մեզի համար նուիրական տեսակետներ, որոնք բնաւ չեն հաշտութիւն պատերազմին և մանաւանդ տեսական պատերազմներու հետ: Ու մեր այս տեսակետը պէտք է որ յարգուի: Քաղաքակրթութիւնն է եղած մեր միակ նպատակակէտը: Եւ մեզի պէտք է հանգիստ թողուլ որ մենք մեր քաղաքակրթութեան դերը կատարենք:

Տարիէ մը ի վեր է որ որոշուած է օտնել մեր այդ քաղաքակրթութեան հիմնարկներն դարապուրիսը՝ Հայ Գրեորու Գրեորին 1500 ամեակը և Հայկական Տպագրութեան 400 ամեակը:

Կովկասահայերը ժամանակին տօնեցին այդ նուիրական օրը, Բայց թրքահայոց՝ գլխուն խառնակութեան պատճառաւ Հայրապետական կարգադրութիւն մը սահմանեց տարուան մը ընթացքին մէջ կատարել, երբ մեր գլուխը խաղաղի:

Ինչպէս կ'երեի մեր գլուխն ալ խաղաղելիք չունի: Սահմանուած ժամանակը իր վախճանին ահա կը մօտենայ և մենք չենք կարող յետաձգել այդ յրբեխանը:

Կազմուած Յրեւանական Յանձնաժողովները գործի սկսելու են ամէն տեղ և որոշուելու է վերջապէս այս տօնին կատարելիք օրն ու նպատակը:

Այդ տօնին կատարուած ոչ միայն մեր դարեւոր քաղաքակրթութեան համար նըշանակութիւն ունի, այլև մեզ չընթացող ազգերու և ցեղերու աչքին ալ նշանակութիւն ունենալու է, մինչ պատկառելու համար, մանաւանդ անոնց, որոնք մեր հին պատմական գոյութիւնը կուրանան այսօր և զորօրինակ մեզի կը հաւասարեցնեն Քիւրտին ու նոյն իսկ Քիւրտութեն սերած ըլլալու վարկածն ալ կուզեն վերագրել, մինչդեռ մենք հայերս հազարաւոր տարիներու մեր գոյութիւնը ունեցեր ենք այս հողամասին վրայ և ոչ միայն մեր Գիրն ու Տպագրութիւնը ունեցեր ենք, այլև ամբողջ քաղաքակրթութիւն մը, մինչ Քիւրտը ոչ միայն իր Տպագրութիւնը չէ ունեցեր, այլև իր գիրն ու զըրականութիւնն անգամ չունի դեռ և ո՞վ գիտէ թէ պիտի ունենայ ալ...:

Մեր իսլամ եղբայրակիցները մեզի թող չայպանեն ուրեմն, երբ մենք այսօր, այս ընդհանուր սուգին մէջ, խօսքերը կը նենք մեզի համար խիստ մեծ նշանակութիւն ունեցող այդ Յրեւանին:

Գրեորնք, սուգին մէջ հարսնիք չըլլար. բայց ի՛նչ ընենք որ ստիպուած են ընել և պէտք չէ որ ասկէ աւելի երկարաձգենք, քանի որ ոչ այս պատերազմը վերջանալիք

ունի և ոչ ալ մեր սգաւոր գլխէն սուգը վերնալիք ունի:

Լուսազոյն չէ՞ որ ինչ որ պիտի ընենք օր առաջ ընենք և վերջացնենք. ո՞վ կ'ընչաւորէ թէ ասկէ լուսազոյն օրեր պիտի գան...

Ա.Վ.Ս